# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*12 դեկտեմբերի 2018թվականի N 998*

*ՎԱՐՈՒԺԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի և հաշվի առնելով, որ նշված հողատարածքները չեն դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Վարուժան Ալեքսանյանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի դիմումը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1. Վարուժան Ալեքսանյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.204569 հա /0576-0015 ծածկագրում/, 0.106068 հա /0967-0142 ծածկագրում/ մակերեսներով հողամասերի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքները:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*12 դեկտեմբերի 2018թվականի N 999*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 941 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին» N 941 որոշման մեջ 1-ին կետի 1) ենթակետից հետո լրացնել 2) ենթակետ հետևյալ խմբագրությամբ.*
*-«2) Մրցույթի նախապատրաստական աշխատանքների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանին»:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13-դեկտեմբերի 2018թվականի N 1000*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 1290.0քմ մակերեսով 0522-0011-ից ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Ջրավար Անդրանիկի պողոտա 68/8:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*13 դեկտեմբերի 2018թվականի N 1001*

## *ԱՌԵՎՏՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված հողամասի հատակագծերը, Հերիքնազ Համբարձումյանի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի դիմումը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Գեղարքունիքի մարզի Ջովաբեր 2-րդ փողոց թիվ 30 տան բնակչուհի Հերիքնազ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 08052018-07-0078, ծածկագիր՝ MX8RVQ4AAFB5) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց 4/3 հասցեում գտնվող առևտրի սպասարկման կենտրոնի 0.0143 հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 4/3-1,*

*0.0135 հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 4/3-2,*

*0.0436 հա մակերեսով մասինը թողնելով նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 4/3:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*13 դեկտեմբերի 2018թվականի N 1002*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրասպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 29 մասնագիտական եզրակացությունը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 93 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչ Արթուր Ասրյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 95/12 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 24.95քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 24.95քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսությանբաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*13 դեկտեմբերի 2018թվականի N 1003*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետին Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24 կետի 3-րդ ենթակետի.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 68/8 հասցեում գտնվող 1290.0քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*14 դեկտեմբերի 2018թվականի N 1004*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված«ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրասպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 30 մասնագիտական եզրակացությունը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 94 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Համլետ Գյուլումյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս82/28 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 35.59քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 35.59քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսությանբաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*14 դեկտեմբերի 2018թվականի N 1005*

*ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրասպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2018 թվականիդեկտեմբերի 14-ի թիվ31մասնագիտական եզրակացությունը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 302 շենքի թիվ 27 բնակարանի բնակիչ Արմեն Ներսիսյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 359 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 27.05քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 27.05քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*14 դեկտեմբերի 2018թվականի N 1006*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 07 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N07 արձանագրությունը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հաստատել Հրազդան համայնքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 07 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի 2018 թ.
դեկտեմբերի 14-ի N 1006 որոշման

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ7*
*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ*

*ք. Հրազդան* *13.12.2018թ.*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշման, մ/թ դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ Հրազդան համայնքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստը՝ 2018 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած թիվ 3 և թիվ 5 երթուղիների մրցույթի արդյունքների ամփոփմամբ, նախագահությամբ՝*

*հանձնաժողովի նախագահ՝ Հայկազ Առաքելյան*

*քարտուղարությամբ՝ հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Կարապետյան*

*մասնակցությամբ՝ հանձնաժողովի անդամներ՝*

*Ռոբերտ Դանիելյան -հանձնաժողովի անդամ*

*Գոռ Մաթևոսյան -հանձնաժողովի անդամ*

*Վարուժան Զոհրաբյան- հանձնաժողովի անդամ*

*Ալեքսան Եղիշյան -հանձնաժողովի անդամ*

*Արտյոմ Հակոբյան- հանձնաժողովի անդամ*

*Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Առաքելյանը ներկայացրեց մրցութային թերթիկներում հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատականների ամփոփիչ թվերը՝ մրցույթին մասնակցող <<Սպեցտրանսպորտ>> ՍՊ ընկերության և <<Գրանտիկ>> ՍՊ ընկերության մեքենաների վերաբերյալ: <<Սպեցտրանսպորտ>> ՍՊ ընկերության՝ ընդհանուր հաշվարկով թիվ 3 երթուղու առավելագույն ընդհանուր միավորը կազմել է 87 միավոր, թիվ 5 երթուղու առավելագույնը՝ 82 միավոր, իսկ <<Գրանտիկ>> ՍՊ*

ընկերության թիվ 3 երթուղու առավելագույն ընդհանուր միավորը կազմել է 78 միավոր, թիվ 5 երթուղու առավելագույնը՝ 76:

Մասնակիցների հավաքած առավելագույն ընդհանուր միավորներից ելնելով հաղթող է ճանաչվել <<Սպեցտրանսպորտ>> ՍՊ ընկերությունը:

Սպասարկման ժամկետը սահմանել 3 տարի, ուղեվարձը՝ 90 դրամ:

Առաջարկել Հրազդան համայնքի ղեկավարին ընդունել որոշում՝ մրցութային հանձնաժողովի սույն արձանագրությունը հաստատելու մասին:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Առաքելյան

Քարտուղար՝ Լ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

# *ՈՐՈՇՈՒՄ*

*17 դեկտեմբերի 2018թվականի N 1007*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 60 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ, ԾԱԾԿԻ, ՊԱՐՍՊԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ՄԵԿ ԴՌԱՆ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱԶԳԵՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և հիմք ընդունելով Խաչատուր Նիկողոսյանի 2018 թվականի դեկտեմբերի 11-ի դիմումը, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2018 թվականի ապրիլի 16-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը գրանցված գրանցամատյանում 910, ՀՍՍՀ Հրազդանի տեխնիկական գույքագրման բյուրոյի կողմից 1987 թվականի սեպտեմբերի 20-ին տրված բնակելի տան տեխնիկական անձնագիրը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսների համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>*

*1.Վերականգնել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան խճուղի թիվ 60 հասցեում գտնվող Խաչատուր Նիկողոսյանին պատկանող 906.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 38.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ Խաչատուր Նիկողոսյանի սեփականության իրավունքը:*

*2.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան խճուղի թիվ 60 հասցեում գտնվող Խաչատուր Նիկողոսյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցած 17.78 քմ արտաքին մակերեսով կաթսայատունը, 10.01 քմ մակերեսով ծածկը, 4.45 քմ մակերեսով*

*պարիսպը և բնակելի տան ինքնակամ բացած մեկ դուռը:*

*3.Հողամասի սահմանները որոշվում են «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*4.Ինքնակամ կառուցած կաթսայատունը, ծածկը, պարիսպը և ինքնակամ բացած դուռը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:*

*5.Ինքնակամ կառուցած 17.78 քմ արտաքին մակերեսով կաթսայատունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:*

*6.Սույն որոշման ընդունման օրվանից ինքնակամ կառուցած 10.01 քմ մակերեսով ծածկի համար սահմանված 13100 /տասներեք հազար մեկ հարյուր/ դրամ, 4.45քմ մակերեսով պարիսպի համար սահմանված 6000 /վեց հազար/ դրամ և բնակելի տան ինքնակամ բացած մեկ դռան համար սահմանված 1300 / մեկ հազար երեք հարյուր/ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Խաչատուր Նիկողոսյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:*

*8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*18 դեկտեմբերի 2018թվականի N 1008*

*ԱՅԳԵՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վահե Պետրոսյանի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 247 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Վահե Պետրոսյանին պատկանող (ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ նոտարական տարածքի նոտարի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 17-ին տրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, գրանցված գրանցամատյանում թիվ 2860) Հրազդան քաղաքի Աղբյուրակ այգեգործական զանգվածում գտնվող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս, Այգեգործական զանգված, 5-րդ փողոց 33 :*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 դեկտեմբերի 2018թվականի N 1009*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.2018 թվականի դեկտեմբերի 21-ին հրավիրել Հրազդան համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 դեկտեմբերի 2018թվականի N 1010*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանի 1-ին հոդվածի 8.4 կետի.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1. Հաստատել Հրազդանի համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված 2018 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացվող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

20/12/2018
11:00

*19/12/2018 11:01:49*
*աշխատակազմի քարտուղար (ծածկագիր ՝ ՀՐ-1.1-1)*

*Հավելված*
*Հրազդան համայնքի ղեկավարի*
*2018 թվականի դեկտեմբերի 19-ի*
*N 1010 որոշման*

# Հանձնաժողովի կազմը

Արնիկ Ժորայի Եփրեմյան

*Հասցե* ՝ Միկրոշրջան 88/40
*Հեռախոս (տան,աշխատանքի,բջջ)* ՝
*Հաստատությունը* ՝ Համայնքապետարան
*Պաշտոնը* ՝ Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ

Վարուժան Սաֆարյան

*Հասցե* ՝ Վանատուր 571
*Հեռախոս (տան,աշխատանքի,բջջ)* ՝
*Հաստատությունը* ՝ Համայնքապետարան
*Պաշտոնը* ՝ Համայնքի ղեկավարի տեղակալ

Արմեն Հակոբյան

*Հասցե* ՝ Ք.Հրազդան Րաֆֆու 60
*Հեռախոս (տան,աշխատանքի,բջջ)* ՝
*Հաստատությունը* ՝ Մարզպետարան
*Պաշտոնը* ՝ Բաժնի պետ

Սամվել Սահակյան

*Հասցե* ՝ Կոտայքի մարզ գյուղ Լեռնանիստ 4/44
*Հեռախոս (տան,աշխատանքի,բջջ)* ՝
*Հաստատությունը* ՝ Մարզպետարան
*Պաշտոնը* ՝ Գլխավոր մասնագետ

Վոլոդյա Մակարեի Ավետիսյան

*Հասցե* ՝ Ջրառատ 98
*Հեռախոս (տան,աշխատանքի,բջջ)* ՝
*Հաստատությունը* ՝ Ավագանի
*Պաշտոնը* ՝ Ավագանու անդամ

Հասմիկ Ջելիմխանի Հարությունյան

*Հասցե* ՝ Կենտրոն 31/91
*Հեռախոս (տան,աշխատանքի,բջջ)* ՝
*Հաստատությունը* ՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
*Պաշտոնը* ՝ Թիվ 13 ավագ դպրոց

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 դեկտեմբերի 2018թվականի N 1011*

*ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՄՐԱՀԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով համապատասխան «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, Նարինե Մխիթարյանի 2018 թվականի դեկտեմբերի 10-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հանքավան գյուղի 3-րդ փողոց թիվ 21 տան բնակչուհի Նարինե Մխիթարյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջանթաղամասի 4-րդ փողոց թիվ 24 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N22052017-07-0016, ծածկագիր՝ Z5TLNSKYVLFX) հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած298.8 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը:*

*2.Սույն որոշման ընդունման օրվանից առևտրի սրահի օրինականացման համար սահմանված 777000(յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 դեկտեմբերի 2018թվականի N 1012*

*ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի և որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով համապատասխան «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, Անդրանիկ Գևորգյանի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 20 տան բնակիչ Անդրանիկ Գևորգյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավայինթաղամասի Սպանդարյան փողոց թիվ 64 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 17062016-07-0002, գաղտնաբառ՝ VA4VATWQTXD1) բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 101.26 քմ արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կետը, իսկ շինության տակ գտնվող 101.26 քմ հողամասի գործառական նշանակությունը փոփոխել բնակելիից հասարակականի:*
*2.Սույն որոշման ընդունման օրվանից ավտոտեխսպասարկման կետի օրինականացման համար սահմանված 263500 /երկու հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*
*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*